



*«Նոր ժամանակի
կրթունքը նաև է» ՀԿ*

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Նորագույն տեղեկատվական
տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի
հոգեբանական զարգացման գործում*

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Սուսաննա Բեժանյան

Ուսումնական հաստատություն՝ Քարկոփի միջն. դպրոց

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների
ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական
զարգացման գործում

Հիմնահարց՝ Ինչպե՞ս են SS-ները ազդում տարրական
դպրոցում ուսուցման որակի վրա

Նպատակ՝ Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել
տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ ուսումնական
գործընթացի արդյունավետության բարձրացման
հնարավորությունները, չարաշահման կանխարգելման և բացասական
հետևանքների հաղթահարման ճիշտ ուղիների ընտրությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ1. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՂ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	
1.1. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	6
1.2. ՏՀՏ-ՆԵՐԻ ՃԻՇՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԻ ՏԱՐԲԵՐ ՓՈԻԼԵՐՈՒՄ..	10
1.3. ՏՀՏ-ՆԵՐԻԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆՈՒԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	18
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես գիտենք, դպրոցին ու հատկապես ուսուցչին է լիազորված ապագայի կերտումը: Հենց նրանց պարտականությունն է՝ այսօրվա երեխային կրթել ժամանակի պահանջներին համապատասխան, դաստիարակել բազմակողմանիորեն՝ պատրաստել նրան որպես վաղվա կայացած քաղաքացի և հասարակականությանը պիտանի մարդ:

Ներկա ժամանակում աշխարհը փոխվում է գլխապտույտ արագությամբ: Փոփոխությունների են ենթարկվում ինչպես սոցիալ-քաղաքական, այնպես էլ տնտեսական արժեքները: Փոփոխությունների այդ շղթան ստիպում է վերանայել հին արժեքները, կատարելագործել դրանք, հարկ եղած դեպքում ստեղծել նորերը: Առաջնային է դառնում նաև ուսուցման մեթոդային զինանոցի թարմացումը: Եթե նախկինում երեխաներն դանդաղ ու աստիճանաբար էին ճանաչում աշխարհը, ապա այսօր SS-ների զարգացման արդյունքում բախվում ենք երեխայի վաղ զարգացման իրողության հետ:

Ներկա դարաշրջանում սովորողների լիարժեք կրթությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է համարվում դասապրոցեսների ընթացքում ներառել SS-ները:

Քանի որ ներկա դարաշրջանում համակարգիչը տեղեկության ստացման և մշակման հզոր գործիք է, այդ պատճառով շատ կարևորվում է նրա ներդրումը կրթության բոլոր աստիճաններում:

Նոր տեխնոլոգիաների կիրառումը կարող է փոխել ուսուցման ընթացքը՝ դարձնելով այն ավելի հետաքրքիր և արդյունավետ:

Այս նյութի ուսումնասիրությունը կբացահայտի տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման գործում, նրա դրական և բացասական ազդեցությունը անձի ձևավորման գործընթացում:

Սակայն ամեն ինչ գեղեցիկ ու օգտակար է չափի մեջ: Դրա համար չպետք է մոռանալ տեղեկատվական տեխնոլոգիաների վնասակար ազդեցության մասին: Գիտենք, որ այս տեխնոլոգիաների չարաշահումը բացասաբար է անդրադառնում սովորողի նյարդային համակարգի գործունեության, հոգեկան զարգացման և առողջության վրա:

Այս նյութի ընտրության կարևորությունը այն է, որ ուսումնասիրելուց հետո պետք է կատարել հետևություններ հոգուտ աշակերտի: Առաջնային և կարևոր պետք է լինի դասապրոցեսում SS-ի օգտագործման միջոցով կրթության արդյունավետության ու որակի բարձացումը, ինչպես նաև աշակերտների պաշտպանությունը տեղեկատվական տեխնոլոգիաների բացասական գործոններից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

1. SՅՏ-ների կիրառման շնորհիվ զարգացնել աշակերտների մտածողությունն ու գրելու հմտությունները:
2. Ստացած գիտելիքների արդյունքում աշակերտները կարողանան ձեռք բերել, գնահատել, արժեքավորել և փոխանցել տեղեկությունները:
3. Երբեք չչարաշահել SՅՏ-ների օգտագործումը դասապրոցեսում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.

Աշխատանքի համար հիմք են ծառայել նորագույն տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները կրթության ոլորտում ներառելու առաջավոր փորձի ուսումնասիրման և ընդհանրացման, զրույցների, հարցումների մեթոդները:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ և ԴԵՐԸ
ՍՈՎՈՐՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Լսեցի՝ մոռացա, տեսա՝ հիշեցի»

Առանց տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ), մեր օրերում անհնար է առաջընթացը պետական և հասարակական գործունեության ցանկացած բնագավառում:

Համակարգչային տեխնոլոգիաները լայն կիրառություն ունեն ինչպես հասարակական-գիտական կյանքում, այնպես էլ կրթության բոլոր բնագավառներում:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունն ու որակը: Դրանք միաժամանակ սովորողների համար ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում միջառարկայական կապերի ամրապնդմանը:

Կրտսեր դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա ուսուցումը: Սա տարրական դպրոցի ուսուցչի համար հստակ պատասխանատվություն է պահանջում: Նրա խնդիրն է ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգևոր հիմքը հաստատել, բացահայտել նրա լավագույն որակները, այլև բարձր առաջադիման հասնելու ուղիներ ցույց տալ:

Հենց վերջինն էլ հատկապես կարևոր է այժմյան արագ փոփոխվող, տեղեկատվությամբ հեղեղված աշխարհում¹:

SS-ի օգտագործումը խթանում է ուսումնական գործընթացը՝ այն դարձնելով բովանդակալից, հագեցված և ամբողջական:

Այս գործընթացը պետք է ոչ միայն տեխնիկական կարողություններ ու հմտություններ տա աշակերտներին, այլև պետք է բարենպաստ պայմաններ ստեղծի ազգային և համամարդկային արժեքներ կրող, ազատ անհատի ձևավորման համար:

SS-ի օգտագործումը տարրական դասարաններում օգնում է սովորողներին զարգացնել իրենց հմտություններն ու կարողությունները, տիրապետել տեղեկատվական դաշտում աշխատելու գործնական միջոցներին, ընդլայնում է դիտողականությունը, նպաստում է ինտելեկտուալ զարգացմանը, ինչպես նաև ձևավորում է հետազոտական աշխատանքի հմտություններ:

SS-ների օգտագործման հնարավորությունների պաշարը բավականին առատ է: Իհարկե աշխատելով կրտսեր դպրոցականի հետ անհրաժեշտ է հիշել պատվիրանը «Մի՛ վնասիր»:

Երեխային պետք է վարժեցնել աշխատել տեղեկատվության դաշտում, սովորեցնել սովորել: Այդ նպատակների իրականացման համար տարրական դասարանների ուսուցչի գործունեության մեջ SS միջոցների կիրառումն անհրաժեշտություն է դառնում: Կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացում SS- ների օգտագործման նպատակահարմարության մասին են խոսում նրանց տարիքային այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսինք են անկայուն ուշադրությունը, բարձր շարժողական ակտիվությունը, ձգտումը խաղային գործունեության, ճանաչողական հետաքրքրությունների բազմազանությունը, տեսողական-պատկերավոր մտածողության զարգացումը՝ բանավոր և տրամաբանական մտածողության համեմատությամբ: Եթե տեղեկատվությունը չի ընկալվել, ապա այն չի կարող հասկանալի, յուրացված լինել, չի կարող դառնալ անհատի սեփականությունը:

¹ՆԱԽԱՇԱՎԻՂ, 5.2017, էջ 54-55.

Այսօր անհնար է որակյալ և մատչելի ուսուցում իրականացնել առանց ՏՏ-ի օգտագործմամբ: Դպրոցներում հիմնվել են համակարգչային դասարաններ, որոնք ապահովված են համացանցով:

Առաջին դասարանում՝ գրաճանաչության շրջանում, նոր նյութի հաղորդման ժամանակ օգտագործվում են համակարգչային խաղեր, անիմացիոն պատկերներ, երգող տառերի մասին տեսահոլովակներ և այլն:

ՏՀՏ-ի օգտագործումը տարրական դասարաններում օգնում է զարգացնել աշակերտների հմտություններն ու կարողությունները, ընդլայնում է դիտողականությունը, նպաստում է ինտելեկտուալ զարգացմանը, ինչպես նաև ձևավորում է հետազոտական աշխատանքի հմտություններ:

Առաջին դասարանցիների հետ աշխատելիս դժվարություններ են առաջանում՝ հատկապես ուսումնական տարվա առաջին օրերին: Քանի որ նրանք անընդհատ շարժման մեջ են, հեշտ չէ նրանց ուշադրությունը որոշակի ժամանակով կենտրոնացնել ուսումնական նյութի վրա, տառի ուսուցման համար պետք է նախապես պատրաստվել յուրաքանչյուր դասին, հարստացնել ուսուցանվող նյութի և տեղեկությունների պաշարը: Կարելի է պատեհ պահին ստեղծել զվարճալի , խաղային կամ երեխաների հուզական աշխարհի վրա ներագող իրադրություն: Հետաքրքրությամբ ու բերկրանքով ընկալված գիտելիքները երկար ժամանակ են մտապահվում փոքրիկների հիշողությանմեջ: Աստիճանաբար դրանք հարստացվում են, և տարական կրթության ավարտին նրանք արդեն ունենում են առարկայական նախագիտելիքների բավականաչափ պաշար: Որպեսզի երեխաները սիրով ու անհագ ցանկությամբ յուրացնեն նոր նյութը, պետք է յուրաքանչյուր թեմա մատուցել նորովի, օգտագործելով ձեռքի տակ եղած բազմատեսակ պարագաներ ու զանազան հավաքածուներ,ինչպես նաև օգտվել համացանցից: Նրանք ցանկանում են խաղալ, երգել, պարել ու դրա համար էլ դասը պետք է կազմակերպել այնպես, որ հիմնական նյութի հաղորդումը զուգակցվի խաղերի, երգերի, պարի և ռիթմիկ մարմնամարզության հետ:

Փորձը ցույց է տալիս, որ ուսուցմանն օգնող լրացուցիչ պահեր կարելի է կազմակերպել հանելուկների և խաղային իրադրությունների ստեղծման ճանապարհով:

Ուսումնական գործընթացում SS-ի կիրառման շնորհիվ սովորողը կարողանում է համագործակցել իր հասակակիցների հետ, դառնում է նախաձեռնող և ստեղծագործող: Այսպիսի ուսուցումը օգտակար է նրանով, որ երեխան ավելի արագ և սահուն է անցնում գրելուն և կարդալուն:

Առավել հաճախ դասերն անցկացվում են էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակի միջոցով, որը նպաստում է ուսուցման գործընթացի բարելավմանը: Դրա շնորհիվ արդյունավետ է դառնում սովորողների և դասավանդողների անհատական և խմբային աշխատանքը:

Մուլտիմեդիան նյութի և գործընթացների ներկայացումն է ոչ թե ավանդական տեքստային նկարագրությամբ, այլ ֆոտոնկարների, տեսանյութերի, զճագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ: Այդտիպի դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, որի ժամանակ երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով, հաճույքով են կատարում առաջադրանքները, ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում: Այստեղ առկա են երկու հիմնական առավելություններ՝ որակական և քանակական: Որակական առումով SS-ի ընձեռած հնարավորությունն ակնհայտ է, եթե ուղղակի համեմատենք բանավոր նկարագրությունը տեսաձայնային ներկայացման հետ: Քանակական առավելության տեսանկյունից մեդիամիջավայրն անհամեմատ առատ տեղեկություն է պարունակում²:

Հաստատված է, որ նյութի բանավոր մատուցման ժամանակ սովորողը բռնկում է ընկալում է և ընդունակ է վերլուծել մինչև հազար պայմանական միավոր տեղեկություն, իսկ տեսողական օրգանների <<միացման>> դեպքում՝ մինչև 100 հազար այդպիսի միավոր:

Ապացուցված է, որ առավել զարգացած է կրտսեր դպրոցականների կամային ուշադրությունը: Այն կենտրոնանում է հատկապես, երբ ուսումնական նյութը նրանց

²<https://ashxengri1goryan.wordpress.com/2014/02/02/%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A%D5%BF%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BF%D5%A5%D5%AD%D5%B6%D5%B8%D5%AC%D5%B8%D5%A3%D5%AB%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D6%85%D5%A3%D5%BF%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80/>

համար հետաքրքիր է, առանձնանում է իր պարզությամբ, պայծառությամբ և դրական հույզեր է առաջացնում:

Տարրական դպրոցի ևս մեկ առանձնահատկություն. տեքստ-նկար հարաբերակցության մեջ վերջինս գերիշխում է: Տեքստը եզրակացություններ են, ժամկետներ, հիմնաբառեր: Ամենագլխավորը այն է, որ ոչ բոլորը կարող են կարդալ: Եվ ահա այստեղ՝ շարժանկար է, որտեղ տառերը իրենց գունագեղությամբ գրավում են ուշադրությունը և, նույնիսկ ամենափոքրերը ամեն ինչ կցանկանային կարդալ:

1.2 SS-ՆԵՐԻ ՃԻՇՏԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԻ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ

SS-ն օգտագործվում է դասի տարբեր փուլերում:

- Սովորողների նախապատրաստում նոր նյութի յուրացմանը
- Նոր նյութի յուրացում
- Նոր նյութի ամրակայում
- Դասի ամփոփում
- Տնային առաջադրանք նոր տեխնոլոգիաների կիրառմամբ:

Պակաս կարևոր չէ դասապրոցեսի կազմակերպման ժամանակ հաշվի առնել սովորողների գիտելիքների և ունակությունների առկայությունը համակարգչային տեխնիկայի ոլորտում: Դրա համար դասապրոցեսի առաջին փուլում խորհուրդ է տրվում օգտագործել աշխատանքի կազմակերպման խմբային ձևը:

Համակարգչի կիրառմամբ ուսումնական գործընթացն իրականացնելիս ուսուցիչը պետք է.

- Ձևակերպի իր պահանջը թեմային համապատասխան
- Արդյունավետ ձևով իրականացնի անհրաժեշտ տեղեկատվության որոնումը
- Մշակի տեղեկատվությունը և համապատասխանեցնի դասավանդվող թեմային

- Արդյունավետ կիրառի տեղեկատվական տեխնոլոգիաները կոնկրետ վարժությունների կատարման ժամանակ:

Գործնական աշխատանքի համար նախատեսված բոլոր առաջարկվող վարժությունները պայմանականորեն բաժանում ենք չորս խմբի՝

- տեղեկատվության որոնում,
- մոդելի մշակում,
- շինվածքի պատրաստման տեխնոլոգիա,
- աշխատանքի ներկայացում:

Առաջարկվող մեթոդով գործնական աշխատանքի կատարումը թույլ կտա կրթական տարբեր աստիճաններում կատարելագործել սովորողների գիտելիքները համակարգչի հետ աշխատելիս՝ աստիճանաբար մեծացնելով տեղեկատվության օգտագործման ծավալը: Նշենք նաև, որ խմբերի աշխատանքները պետք է ներկայացվեն միմյանց և քննարկվեն: Կարելի է անցկացնել նաև ինքնագնահատում և փոխադարձ գնահատում: Կարևոր հանգամանք է սովորողների անցումը մի մակարդակից մյուսը:

Տարրակն դասարաններում «Մաթեմատիկա» առարկայի ուսումնական գործունեության տեսակներից են նաև ուսումնասիրությունների, դիտարկումների, չափումների արդյունքների գրանցումն ու մշակումը, գծապատկերային աշխատանքների կատարումը, նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի օգտագործումը: Դրանց կատարումը կարելի է կազմակերպել ինչպես ինքնուրույն, այնպես էլ՝ խմբերով:

Տվյալները հավաքվում են հարցումների, դիտարկումների, փորձերի, չափումների միջոցով: Հետազայում դրանք ներկայացվում են աղյուսակների, սյունակային տրամագրերի (դիագրամների) տեսքով:

Այդ աշխատանքներն ավարտելուց հետո ուսուցիչը հերթով կատարում է դրանց մեծադիր ցուցադրումները և կազմակերպում տվյալների համեմատման, վերլուծման աշխատանքներ: Միաժամանակ աշակերտներին առաջարկվում է աղյուսակներում

փոխել տվյալները: Նրանք նկատում են, որ տվյալների փոփոխությունից փոխվում է տրամագրի տեսքը: Աշակերտներն ուսուցչի առաջարկությամբ կատարում են եզրահանգում. տրամագիրը մշտապես կապված է այն տվյալների հետ, որոնց հիման վրա կառուցված է:

Ժամանակակից համակարգիչները թույլ են տալիս ներառելու տեքստեր, գրաֆիկա, ձայն, անիմացիա, լուսանկարներ, տեսագրություններ: Այս ամենը հնարավորություն է տալիս ուսուցչին՝ ուսումնական նյութը շարժման և զարգացման մեջ ցուցադրելու և պարզաբանելու իմաստով:

Մեդիատեխնոլոգիաները ուսուցչին հնարավորություն են տալիս ցանկացած պահին գտնելու և օգտագործելու տվյալ դասի թեմային համապատասխան նյութեր: Այդ փնտրտուքների ընթացքում ակամա ստանում են տեղեկատվության մեծ պաշար:

Նոր տեխնոլոգիաների օգտագործման առավելություններից մեկն այն է, որ աշակերտը հայտնվում է ուսումնական գործունեության կենտրոնում, իսկ ուսուցիչը հանդես է գալիս միայն օգնողի դերում: Այս պարագայում բարձրանում է աշակերտի ակտիվությունն ու ինքնուրույնությունը:

Սովորողների համար այս լուրջ գործիքը՝ մեդիատեխնոլոգիան, հաճախ հետաքրքիր խաղալիք է թվում, որը թույլ է տալիս մոռանալ ուսուցման դժվարությունները: Այս աշխատանքի ընթացքում աշակերտը մեծ թվով թեմատիկ բառապաշար է հավաքում, ինչը բավականին ծանր գործ է միայն դասագիրքը օգտագործելիս: Նույնիսկ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները բավականին ակտիվորեն են մասնակցում այս տիպի դասերին:

Այսպիսով առանձնացնենք տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման կարևոր կողմերից մի քանիսը: Դրանք են՝

- S2S-ի կիրառումը նպաստում է միջառարկայական կապի զարգացմանը, հատկապես ինտեգրված ուսուցման ժամանակ,

- ՏՀՏ-ի կիրառումը նպաստում է, ստեղծագործական և նորարարական մոտեցումների զարգացմանը,
- ՏՀՏ-ի կիրառումը նպաստում է հարուստ բառապաշարի յուրացմանը,
- ՏՀՏ-ի կիրառումը նպաստում է կարողությունների և հմտությունների զարգացմանը, տարածության ընկալմանը, աշխատանքային միջավայրի ստեղծմանը և անհրաժեշտ միջոցներ գտնելու կարողությանը:

Տարրական կրթության իրազեկվածության գործընթացը կատարվում է հետևյալ ուղղություններով.

- ՏՀՏ-ի օգտագործումը որպես ուսուցման դիդակտիկ միջոցներ,
- Դասի կազմակերպում ՏՀՏ-ի օգտագործման դասի տարբեր փուլերում՝ գիտելիքների ամրապնդման և ստուգման, խմբային և անհատական աշխատանքների համար,
- ՏՀՏ-ի օգտագործմամբ կրտսեր դպրոցականների նախագծային աշխատանքների իրականացում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը պետք է ունենա կրթական խնդիր, օգնի երեխային կողմնորոշվել տեղեկատվական հեղեղի մեջ, և ոչ մի դեպքում չպետք է վնասի առողջությանը: ՏՀՏ-ի միջոցները պետք է գործեն որպես ուսումնական գործընթացի օժանդակ տարր, այլ ոչ հիմնական:

Մեդիատեխնոլոգիաները կարող են օգտագործվել.

- Թեմայի նշման համար՝ դասի թեման ներկայացվում է սլայդների միջոցով, որտեղ համառոտ շարադրված են ուսումնասիրվող հարցի հիմնական կետերը:
- Որպես ուսուցչի բացատրությունների ուղեկից օգտագործվում են կոնկրետ դասերի համար ստեղծված մեդիակոնսպեկտ-շնորհանդեսներ՝ ստեղծելով համառոտ տեքստ, հիմնական բանաձևեր, գծագրեր, նկարներ, տեսա-նյութեր, անիմացիաներ:
- Որպես տեղեկատու-ուսուցողական ձեռնարկ. Այսօր հատուկ շեշտադրվում է սովորողի ինքնուրույն գործունեությունը: Ուսուցիչն այս դեպքում հանդես է գալիս որպես ուսուցման գործընթացի կազմակերպիչ, սովորողների

ինքնուրույն գործունեության ղեկավար, որը ցույց է տալիս անհրաժեշտ օգնություն:

- Գիտելիքների ստուգման համար համակարգչային թեստավորումը բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը և ակտիվացնում դպրոցականների ճանաչողական գործունեությունը:

1.3 SS-ՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվի առնելով կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները SS-ի կիրառմամբ դասի ժամանակ խիստ հետևողական պետք է լինել երեխայի առողջության հարցում: Այսպիսով, SS-ի օգտագործումը դասին պետք է կրի նուրբ բնույթ: Ուսուցիչը, դասին նախապատրաստվելիս պետք է հանգամանորեն մտածի SS-ի օգտագործման նպատակի, տեղի և ձևի մասին:

Դասապրոցեսում պետք է կատարել ֆիզկուլտ-դադարներ, աչքերը հանգրստացնող հատուկ վարժություններ:

Ուսուցման գործընթացում ինտեգրված են նաև համակարգչային խաղերը, որոնք նպաստում են երեխաների կողմնորոշվելու ունակությունների, հիշողության, ուշադրության զարգացմանը: Քանի որ լայնածավալ է համակարգչային խաղերի աշխարհը, ապա դասերի ընթացքում օգտագործման համար պետք է ճիշտ ընտրություն կատարել:

Դասապրոցեսներում շատ են օգտագործվում տրամաբանական և ավանդական խաղերը: Տրամաբանական խաղերից հետաքրքրություն են ներկայացնում գլուխկոտրուկները, որոնց լուծման համար պահանջվում են յուրահատուկ և ստեղծագործական մոտեցում: Ավանդական խաղերից մեծ տարածում ունի համակարգչային շախմատը: Դերային խաղերը նպաստում են խաղացողների ստեղծագործական ակտիվության զարգացմանը: Երեխաները շատ են սիրում սեղանային այլ խաղեր, որոնք պահանջում են տրամաբանորեն մտածելու կարողություններ և դժվարությունները հաղթահարելու հմտություններ:

Համակարգչային խաղերի ժամանակ մեծ տարիքի երեխաների մոտ նկատվում է համբերություն և համառություն, որը չկա փոքր տարիքի երեխաների մոտ:

Համակարգչային խաղերը զարգացնում են նաև ռազմավարական կազմակերպման, ստրատեգիկ մտածելակերպի ունակությունները:

Մեծանում է համակարգչային խաղերի դերը, որպես ախտորոշման և վերականգման գործիք: Այն օգնում է գրավոր հմտությունների հետ կապված խնդիրներ ունեցող հաշմանդամ երեխաների ուսուցման գործում: Ինչպես նաև կարելի է օգտագործել խոսքի, տեսողության ուղղման և մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետ աշխատելու ժամանակ: Համակարգչային խաղերի օգնությամբ անհանգիստ ու ամաչկոտ երեխաները բացահայտ արտահայտում են իրենց խնդիրները, ինչը կարևոր է հոգեթերապիայի ընթացքում:

Համակարգչային տեխնոլոգիաների օգնությամբ կարելի է բացահայտել և աջակցել շնորհալի երեխաներին:

Այսպիսով խաղը ուսումնական հատուկ միջավայր է, որում խաղացողը ձեռք է բերում նորանոր հաջողություններ և հմտություններ: Այդ հմտություններից են՝ ինքնուսուցման ճանապարհով գիտելիքների յուրացումը, ինքնուրույն որոշում կայացնելու ունակությունը, տրամաբանելու, ստացված տեղեկությունները համակարգելու կարողությունը:

Համակարգչային խաղի տևողությունը և բովանդակությունը պետք է համապատասխանեն երեխայի տարիքին: Եթե խաղի տեմպը լարվածություն է պահանջում, ապա տևողությունը երկարատև չպետք է լինի, և ընդհակառակը:

Առավել նպատակահարմար է ընտրել այնպիսի խաղեր, որոնք երեխայի մեջ կողքից դիտելու հետաքրքրություն կառաջացնեն: Այս դեպքում նրանք հաճույք են ստանում և հոգեբանական գերձանրաբեռնվածություն չեն զգում:

Համակարգչային խաղերը միայն դրական ազդեցություն չունեն երեխայի հոգեբանական զարգացման գործում: Այն ունի նաև իր բացասական ազդեցությունը: Համակարգչային խաղերի ազդեցության հետևանք կարող է լինել

շրջապատի հետ փոխհարաբերություններում անհամբերության կամ անտարբերության առկայությունը, ագրեսիվությունը, անհանդուրժողականությունը և կամակորությունը:

Ինչպես համակարգչային խաղերն ունեն իրենց բացասական ազդեցությունը, այնպես էլ տեղեկատվական տեխնոլոգիաներն ունեն իրենց վտանգներով լի տեղեկատվությունը:

Համացանցում երեխային սպառնացող վտանգներից են՝

- կայքեր, որոնք չեն համապատասխանում երեխայի մակարդակին,
- տեղեկատվություն, որտեղ քարոզվում է ատելություն և բռնություն,
- ինֆորմացիա, որտեղ տեղադրված են ոչ վայելուչ գովազդներ:

Համացանցը երեխայի համար անվտանգ դարձնելու համար պետք է՝

- բացատրել երեխաներին, որ համացանցում պետք է օգտվեն միայն իրենց տարիքային խմբին համապատասխան կայքերից և ծրագրերից,
- բացատրել երեխաներին, որ երբեք չի կարելի անձնական տեղեկություններ տալ համացանցով,
- բացատրել երեխաներին, որ առողջության պահպանման նպատակով սահմանափակված է համակարգչից օգտվելու ժամանակը / 30 – 40 րոպե/
- բացատրել երեխաներին, որ այս ժամանակահատվածի չարաշահումը կարող է նպաստել տեսողության կրճատմանը, դաստակի և վերջավորության լարվածությանը, պարանոցի և թիկունքի ցավի առաջացմանը³:

Կրտսեր դպրոցական տարիքում շարունակվում է ձևավորվել երեխայի հենաշարժողական ապարատը, դրա համար շատ կարևոր է համակարգչի առաջ ճիշտ նստելը՝ մարմնի դիրքը, աչքերի և համակարգչային էկրանի հեռավորությունը / ամենաքիչը 50 սմ / : Փորձանքներից խուսափելու համար

³ՆԱԽԱՇԱՎԻՂ, 5.2013, էջ 25

Երեխաները պետք է տարրական դասարանից սկսած տիրապետեն անվտանգ համակարգչային հմտություններին:

Ոչ ավանդական եղանակներով սովորելու այս ձևերը բարձրացնում են ուսուցման որակը, ուրախություն մտցնում երեխայի կյանքում, և պարարտ հող հանդիսանում ուսուցիչ և աշակերտ համագործակցության ընթացքում:

Այսպիսով, գիտական և տեղեկատվական ոլորտի նորագույն տեխնոլոգիաները՝ մի կողմից ժամանակակից մարդու պարծանքն են, իսկ մյուս կողմից՝ յուրաքանչյուր ազգի մշակույթին դրական ծառայություն չմատուցելու դեպքում՝ կարող են համարվել լուրջ ահազանգ և սպառնալիք մարդկանց և հասարակությունների ապագայի համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, մեղիատեխնոլոգիաները հարստացնում են ուսուցման պրոցեսը, թույլ են տալիս ուսուցումը դարձնել ավելի արդյունավետ ու հետաքրքիր:

Համոզվեցի, որ գոյություն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման աշխատանքների բազմազան ձևեր կրտսեր դպրոցում անցկացնելու համար: Համակարգիչը դասի բոլոր փուլերում և բոլոր առարկաների ժամանակ առկա է, իհարկե հաշվի առնելով յուրաքանչյուր տարիքի սանիտարահիգիենիկ նորմերը: Արագ զարգացող տեխնոլոգիաները աշակերտներին առավել հետաքրքրող թեմաներ ուսուցանելու լայն հնարավորություններ են տալիս, բարձրացնում ուսման որակը, օգնում հաղթահարել դժվարությունները, ուրախություն մտցնում երեխաների կյանքում, լիարժեք պայմաններ ստեղծում ուսումնական գործընթացում՝ ուսուցչի և աշակերտների փոխըմբռնման և փոխհամագործակցության համար:

Այս աշխատանքի ավարտից հետո, մեկ անգամ ևս համոզվեցի, որ հանրակրթական դպրոցն ավարտելուց հետո աշակերտը պետք է հարուստ գիտելիք ունենա տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների մասին, նաև պետք է կարողանա գործնականում դրանք կիրառել, որը հետագայում գերազանց պայմաններ կստեղծի հաջորդ աստիճանում ուսումը շարունակելու համար:

Բայց այսքան դրական գործոնների կողքին չպետք է մոռանանք նաև տեղեկատվական տեխնոլոգիաների բացասական կողմերի մասին: Ինչպես հասկացա, յուրաքանչյուր պարագայում մեծահասակների առաջնային խնդիրը պետք է լինի երեխաներին այդ բացասակն ազդեցություններից պաշտպանելու գործը:

Եզրակացրի, որ մեղիատեխնոլոգիաները մեծ դեր կարող են ունենալ ազգային մշակույթի ու կրոնի ամրապնդման գործում, կամ էլ ընդհակառակը՝ ոչնչացնել մշակույթը և այդ երկրում տարածել ու ամրապնդել օտար մշակույթի հիմքերը:

Իմ կարծիքով բոլոր մանկավարժներն իրազեկված են այս ամենի մասին, և կարող են պատվով կատարել իրենց վստահված մատաղ սերնդի դաստիարակության պատասխանատու գործը:

Աշխատանքն ուզում եմ ավարտել Կ. Դ. ՌԻՉԻՆՍԿՈՒ գեղեցիկ խոսքերով՝

«ՌԻՍՈՎԵՐՆՈՒՄՆ ԵՍՏՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ՔԱՆԻ ՂԵՌ ՍՈՎՈՐՈՒՄ Է, ԵՐԲ ՂԱՂԱՐՈՒՄ Է ՍՈՎՈՐԵԼ, ՆՐԱ ՄԵՋ ՄԱԿԱՆՈՒՄ Է ՈՒՍՈՎԻՅՐ» :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Դպիր»ամսագիր 50 «Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում»
2. «Դպիր» ամսագիր «Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կրտսեր դպրոցում»
3. «Նախաշավիղ» 1. 2011
4. «Նախաշավիղ»5. 2013
5. «Նախաշավիղ» 6. 2011
6. «Նախաշավիղ»7. 2011
7. Տեր-Գրիգորյան Ա.Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1980
8. www.youtube.com
9. www.blognews.am